

41.

24 Յունիսի 1871. Թիֆլիս.

Իմ ազնիւ, ամենասիրելի բարեկամ

Միքէոն Փանեանց.

Մատուցանող նամակիս է Յակոբ Աղամեանց, որդի մի բարեհամբաւ ծնողի և իմ բարեկամներէց մինի, որ աւարտած լինելով իւր ուսման ընթացքը այս տեղի կլասիկական գիմնազիոնում և աւ լկայութեամբ և մեղալով, եկած է Մոսկուա ուսումնասիրելու Ֆիլոլոգիկական գիտութիւնք համալսարանում: Դա բարեբարոյ պատանի է. և որովհետեւ իբրեւ եկաւոր մարդ կարօտ էր փորձառու և բանագէտ մարդերի առաջնորդութեան և խորհրդակցութեան, հոգալու իւր համար օթեան և այլ պիտոյք կեցութեան տեղումդ, վասն որոյ համարձակում եմ յանձնել այդ պատանին Ձեր հայրական բարեկամութեանը և մարդասիրութեանը. Դորա հայրը, որ այժմուս հանգուցեալ է, ունեւոր մարդ էր և թողած է այնքան կարողութիւն, որ դա կարող է ապահովութեամբ աւարտել իւր ուսումը Մոսկուայում:

Շատ շնորհակալ կը լինէի Ձեզանից, եթէ ծանօթացնէիք այդ պատանին մեր հասարակաց բարեկամին, Գէորգ Բանանեանցին, յանուն իմ խնդրելով նորանից չինայել դորանից իւր բարեկամական խորհրդակցութիւնքը ի մասին մտանելու համալսարան: Դա կամի Ֆիլոլոգ դասաւ, բայց չգիտէ յունարէն. ես ասացի նմա, որ այդ անկարելի էր, և անպատճառ գոնեայ տարի ու կէս պիտի պոտրաստուէր, և այդ մասին կարող էր Բանանեանցը օգնական գտանուել նմա, այս ինքն ճարել նորա համար ուսուցիչ յունական լեզուի:

Իմ նամակներս արդէն Ձեր ձեռքում կը լինին. այսինքն ամսուս 8 և 22-ից: Յանկալի կը լինէր ինձ, որ օր մի յառաջ ստանայի պ. գիրքատօրից իմ պաշտօնակարգութեան թուղթը, որովհետեւ քաներս արդէն ուղարկած, շուտով հարկաւոր էր ինձ ճանապարհ ընկնել: Ես մտածումեմ գալոց ամօի 10-ին:

Դարձեալ և կրկին ողջունելով իմ ազնիւ բարեկամդ և գրական խառնելով մտքի մէջ

մնամ Ձեր Ս. Նազարեանց.

42.

28-ին Յուլիսի 1871. Թիֆլիզ.

Ազնիւ, ամենասիրելի եղբայր,

Ձեր պատուական նամակը առաջիկայ ամսուս 16 թուից ստացայ և շտապում եմ պատասխանել Ձեզ:

Իմ նամակներս, առ Ձեզ արձակած սոյն ամսուս 8-ից և 22-ից մինչև այժմ պիտի Ձեր ձեռքում լինին, գիտութիւն տալով Ձեզ իմ տեղափոխութեան հանգամանքին. ցաւում եմ, որ մինչև այժմ դիրեքտորի կողմից հոգաբարձութիւն եղած չէ հասուցանել ինձ իմ պաշտօնակարգութեան հաստատագիրը, ստորագրած դիրեքտորի կամ թէ հոգաբարձուի և կամ թէ մինիստրի կողմից. Այս բանս փութացնել, որպէս խնդրած եմ Ձեզանից իմ վերջին նամակների առաջինում (այսինքն 8-ից) հարկաւոր էր. թէպէտ դա մի ձև էր և արտաքին ձև, որ միտ գնելով այն ընթացքին, որ ես տուած եմ գործին, պիտի լցուցանուէր, սակայն որովհետեւ իմ տեղափոխութեան խնդիրը արդէն վճռած ու կնքած է այն գրաւոր կրկին և դարձեալ հրաւէրքով, որ ես ստացած եմ դիրեքտորից, վասն որոյ ես մտածում եմ, որ եթէ չստացայ իմ պահանջած թուղթը մինչև 10 Յուլիսի, այնու ամենայնիւ ճանապարհ կընկնիմ, որովհետեւ բաներս արդէն ուղարկած եմ և ինձ հարկաւոր է օր մի յառաջ լինել Մոսկուայում, որ կարողանայի հոգալ ինձ օթեան և պատրաստութիւնք կեցութեան, մի խօսքով աչք բանալ, ինչպէս արդէն գրած եմ Ձեզ:

Սորանով ահա տեղեկութիւն եմ տալիս Ձեզ, որ Յուլիսի 10 գիտաւորուած եմք դուրս գալ Թիֆլիզից. ուրեմն, եթէ Աստուած յաջողութիւն պարգևեց, 25-ին Յուլիսի տեղդ կըլինինք, որ իմ կարծիքով բաւական ուշ էր, որովհետեւ 15-ից օգոստոսի սկսանում են դպրոցական դասատուութիւնքը: Իմ գրեանքը արդէն պիտի Մոսկուայում լինին. բայց զոցա արկղները բանալ, դարձեալ կարգադրել զայդս, ժամանակի և զօրութեան կարօտ է, և ես իսկոյն այդ բանին ձեռնարկել կարող չէի, ճանապարհից վաստակած ու ջաղջախուած:


Յաւում եմ, որ Ձեր բարեկամական յանձնարարութիւնք լցուցանել անկարելի է: Երէցփոխովի ուսու և հայ բառարանը, ինչպէս լսում եմ, բոլոր ծախուած է և չկայ աւելի գրավաճառների մօտ. Ատենի շաբական պօլսատիպ նոյնպէս չունի ոչ մի գրավաճառ այս տեղ: Այնու ամենայնիւ ես կը հետեւեմ այս տեղ, որքան կարելի է ձեռք բերել Ձեր խնդրածը, բայց թէ որպիսի յաջողու-

թեամբ: Եթէ հաճոյ է Ձեզ էջմիածնատիպ շարական, այդ կարող եմ այս տեղ գնել և բերել հետս:

Աւարտումեմ թուղթս, մաղթելով յաստուածուստ շուտով ողջ և առողջ արժանացնել զմեզ միմեանց քաղցր տեսութեանը. ուղարկումեմ Ձեզ և մերայինների յարգութեան և սիրոյ ողջոյնքը: ¹⁾

Ձեր Ս. Նազարեանց:

Յ. Տ. Յակովբեան



ԼԵԶՈՒՆԵՐԻ ԱԶԳԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ.

(տ. Արարատ, 1914, դեկտ.)

Բ.

Այս սկզբունքները մի անգամ պարզելուց յետոյ, դժուար չէ այլ ևս տեսնել թէ ինչպէս կարելի է ապացուցանել լեզուների ազգակցութիւնը:

Ամեն ուր որ ձայնական համակարգութիւնն ու քերականական համակարգութիւնը ներկայացնում են ճշգրիտ համերաշխութիւններ, ուր կանոնաւոր համերաշխութիւններ թոյլ են տալիս ճանաչելու բառերի և ձայնական համակարգութեան նախատիպի (origine) նոյնութիւնը, և ուր քերականական ձևերի համակարգութիւնը բացաղբուրում է մեկնելով միևնոյն հասարակաց նախատիպից, ազգակցութիւնն ակնհերե է: Ռոմանական լեզուներն ակնյայտնի կերպով ազգակից են, որովհետև նախ՝ մանրամասնութեանց

1) Արանով վերջանում են Նազարեանի Թիֆլիզից դրած նամակները Փանեանին, որովհետև նա, Նազարեանը, 1871 թւի ամառայ վերջերին տեղափոխուում է Մոսկւա՝ Լազարեան ձեմարանի պարսկերէնի ուսուցչապետութեան պաշտօնով: Այսպէս ուրեմն, Ներսիսեան դպրոցի երկամեայ տեսչութեան ընթացքում Նազարեանը գրել է Փանեանցին ընդամենը 28 նամակ (№№ 13-ից մինչև 42), չհաշուած այդ թւում այն մի նամակը (№ 44), որ նա գրել է ճանապարհից (Կերչից) 1869 թ. օգոստ. 14-ին, տեսչական պաշտօնով Մոսկուայից դէպի Թիֆլիս գալու ժամանակ: Այնուհետև մօտ 2 տարի բոլորովին ընդհատուում է Նազարեանի նամակադրութիւնը Փանեանցին, որը վերսկսուում է սակայն 1873 թ. մայիսից եւ տեւում մինչև Նազարեանի մահը: Այդքան ժամանակի ընթացքում դրուած է ընդամենը 9 նամակ, զանազան վայրերից, գլխաւորապէս դէպի Պետերբուրգ, Դանիա, Զուիցբրիա եւ Գերմանիա արած ուղեւորութեան միջոցում: Յ. Տէր-Յակ.